

## ԼԵՉՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

### Նանե ՂԱԶԱՐՅԱՆ

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեությունն անխուսափելիորեն առնչվում է բուն լեզվաքաղաքականությանը և հաճախ պայմանավորված է վերջինիս շրջանակներում ընթացող զարգացումներով: Լեզվի հարցը նշված սոցիալական համակարգում բնավ չի սահմանափակվում զուտ տեխնիկական նշանակությամբ. այն կանխորոշում է տվյալ հասարակարգում մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորվածության աստիճանը: Ընդ որում, խոսքը հանրային իրավահարաբերություններում մայրենի լեզվով հանդես գալու կամ այլ լեզվական երաշխիքների մասին չէ. խնդիրն անհեմամատ ընդգրկում է, այն առնչվում է նաև այնպիսի առանցքային սկզբունքների լիարժեք ու հետևողական իրացման հետ, ինչպիսիք են իրավական որոշակիությունը, օրինականությունը և այլն:

Մասնավորապես, զուտ լեզվական չափանիշներով համարժեք ընկալում չապահովող իրավական նորմն ինքնըստինքյան համարվում է իրավական որոշակիության պահանջները չբավարարող՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ. այդպիսի օրենսդրական դրույթներն անգամ կարող են գործնականում ձանաչվել Սահմանադրությանը հակասող:

Հիշյալ հարցադրումները, ցավոք, դեռևս համարժեք հետազոտության նյութ չեն դարձել, ինչը, կարծում ենք, թելադրված է նաև այն հանգամանքով, որ լեզվաքաղաքականության հետ առնչվող իրավագիտության արդի հիմնախնդիրները բացառապես ուսումնասիրվում են իրավագետների կողմից և իրավագիտությանը բնորոշ մեթոդաբանությամբ, սակայն ակնհայտ է, որ տվյալ դեպքում գործ ունենք համալիր ու ամբողջական հետազոտության կարիք ունեցող նյութի հետ: Սույն հոդվածում կփորձենք ողջամիտ շրջանակներում դուրս գալ ավանդական մեթոդաբանությունից և քննարկման առարկա դարձնել լեզվաքաղաքականության հիմնախնդիրները՝ էլեկտրոնային կառավարման համատեքստում:

Այս ոլորտի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն, ըստ էության, ոչ միայն դեռևս բավարար չափով չի ուսումնասիրվել, այլև կառավարման այնպիսի համակարգ է, որն առավելապես է առնչվում ոչ միայն ընդհանուր, այլև համակարգչային լեզվաքաղաքականությանը: Բնական է, որ համակարգչային լեզվաքաղաքականությունը, որին բնորոշ է տարաբնույթ պայմանական նշանների կիրառման պրակտիկան, ունի իր նրբություններն ու իրեն բնորոշ առանձնահատկությունները, որոնք էական ազեցություն ունեն կառավարման արդյունավետության վրա: Ավելին, այսօր նկատվում է էլեկտրոնային կառավարման ոլորտի տերմինների մեծ հոսք նաև առօրյա կյանք, որոնք ոչ միայն հասկանալի չեն հանրությանը, այլև ընդհանրապես բացահայտված չեն: Այդ իսկ պատճառով սույն աշխատության նպատակներից է բացահայտել ՀՀ-ում լեզվաքաղաքականության բնագավառում առկա բացերը և խնդիրները՝ փորձելով գտնել դրանք լուծելու տարբերակներ, որոնք կի-

րառելի կլինեն նաև միանգամայն նոր ոլորտի՝ էլեկտրոնային կառավարման կայացման գործընթացում:

ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 25-ի նիստի N7 արձանագրային որոշման հավելվածով նախատեսվեց Հայաստանի Հանրապետությունում ձևավորել էլեկտրոնային հասարակություն, որի բազմաթիվ նպատակներից մեկն էր ստեղծել և ամբողջ երկրում հասանելի դարձնել էլեկտրոնային կառավարման համակարգը: «Էլեկտրոնային հասարակության ձևավորում» անվանումը կրող ստրատեգիական գործընթացը, անկասկած, մեծ դերակատարում ունեցավ պետական նորարարական քաղաքականության համար՝ ներկայիս գիտատեխնիկական զարգացումները, ինչպես նաև կառավարման հիմունքների վերաբերյալ պատկերացումների արմատական փոփոխությունները հաշվի առնելով:

Ժամանակի պահանջներին համընթաց պետական քաղաքականության նորարարացումն իր տրամաբանական ազդեցությունն է թողնում նաև մասնագիտական տերմինաբանության վրա, որը դեռևս ամբողջականության ու հստակության չափանիշներով թերի և անմշակ է: Էլեկտրոնային հասարակության, ինչպես նաև էլեկտրոնային կառավարման համակարգի կայացման ճանապարհին էլեկտրոնային-համակարգչային մասնագիտական լեզուն կամա թե ակամա ներթափանցում է իրավաստեղծ գործունեության ոլորտ, որի հետևանքով տերմինների անմշակությունը հանգեցնում է լրացուցիչ խոչընդոտների ու անհարկի խառնաշփոթի:

Տերմինաբանության մշակումը բարդ և ժամանակատար գործընթաց է, այն անխուսափելիորեն պետք է միավորի մտածողությունը՝ գիտակցականը, և լեզուն՝ պայմանական նշաններն ու կանոնները: Տերմինաբանության գիտության մեջ ընդունված է ասել, որ տերմինն անուն է, իսկ անունը՝ բառ, հետևաբար՝ տերմինաբանության կայացումն անհնար է՝ առանց լեզվաբանական հստակ հնարքների կիրառման<sup>1</sup>: Շուրջ երկուհազարամյա պատմություն ունեցող իրավաբանական տերմինաբանությունը կարծրացած չէ, այն պարբերաբար ենթարկվել է էական փոփոխությունների՝ ժամանակի պահանջներին համընթաց<sup>2</sup>, որպեսզի բավարարի կոնկրետ ժամանակաշրջանի մտածողության կարիքները և ապահովի մտքի ու լեզվի միասնությունը: Այս տեսանկյունից քսանմեկերորդ դարը բացառություն չէ: Ընդ որում, քաղաքական և ռազմական գերիշխող դիրք ունեցող ժողովուրդները թելադրել են իրավագիտության ոլորտում ողջ լեզվաքաղաքականությունը: Պատահական չէ, որ լեզվի մշակութի հարուստ անցյալ ունենալու պարագայում հայրենական իրավագիտության բառապաշարում արմատավորվել են օտարազգի բազմաթիվ այնպիսի տերմիններ (օրինակ՝ հրաման և այլն), որոնց ծագումնաբանության մասին իրազեկված են բացառապես լեզվի նեղ մասնագետները:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն երկրներում, որոնցում այս կամ այն պատճառով տևական ժամանակով բացակայել է ազգային պետականությունը, քաղաքական-պետական տերմինաբանությունն աղքատ է, հսկված օտարածին տերմիններ կիրառելու: Այս առումով, ի տարբերություն գեղարվեստական հարուստ բառապաշարի, հայերենի քաղաքական-պետական լեզվապաշարը բավականին խոցելի է, այն հաճախ հնարավորություն չի տալիս համապատասխան եզրույթներով ներկա-

<sup>1</sup> St'u Суперанская А.В., Подольская Н.В., Васильева Н.В. Общая терминология: терминологическая деятельность. М., 2005. էջ 161:

<sup>2</sup> St'u Бержель Ж.Л. Общая теория права. М., 2000. էջ 278 – 279:

յացնելու միանգամայն տարբեր իրավական ինստիտուտներ ու երևույթներ: Օրինակ՝ հայերենում «որոշում» եզրույթը ընդհանուր է՝ միմյանցից իմաստով էապես տարբեր «постановление», «решение», «резолуция», «расшивка», «decision», «resolution», «settlement», «judgement» տերմինների համար: Այդ պատճառով օրենսդիրը յուրաքանչյուր դեպքում հարկադրված ամրագրում է այդպիսի անվանումով իրավական ակտ ընդունող մարմինը, որպեսզի անհարկի շփոթ չառաջանա: Ընդ որում, խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ նույն ակտերն ընդունվում են միևնույն մարմնի, դատական աստիճանի կողմից:

Այսօր շատ արագ զարգացող իրականության մեջ հաճախ այնպիսի իրավիճակներ են ստեղծվում, երբ դասական իրավաբանական տերմինները չեն բավականացնում այս կամ այն իրավիճակը քիչ թե շատ համարժեք բնութագրելու համար: Առաջանում է տերմինաբանական յուրովի վակուում, խոչընդոտներ են ստեղծվում ինչպես քաղաքացիների, այնպես էլ իրավագետների համար:

Ուսումնասիրված գրականության մեջ որոշ տեսաբանների կարծիքով՝ հետխորհրդային պետություններում բառացի թարգմանված «E-governance» - «էլեկտրոնային կառավարում» տերմինն իր էությանը համարժեք չի ընկալվում<sup>3</sup>: Կցանկանայինք շեշտել, որ այս հասկացությունը հնարավոր չէ դիտարկել միայն իրավական տեսանկյունից, քանզի այն քաղաքական, սոցիալական, տնտեսական և տեխնիկական բաղադրիչների համակարգ է, ուստի հաջողության գրավականը հենց այս գործոնների գիտականորեն հիմնավորված համամասնությունն ու ներքին փոխհամաձայնեցված կապը բացահայտելն ու իրացելն է: Զուտ տեխնոլոգիական առումով էլեկտրոնային կառավարումը պետական մարմինների գործառույթների իրականացման գործընթացին աջակցող տեղեկատվահաղորդակցային ցանցային ենթակառուցվածք է:

Իսկ արդյոք «էլեկտրոնային կառավարում» հասկացությունը լեզվաբանության տեսանկյունից ընդհանրապես որևէ իմաստ արտահայտում է, թե՞ այն ընդամենը վերացական հասկացություն է, որի բովանդակությունը դեռևս բացահայտված չէ: Լեզվաբանական առումով այս հարցին դժվար է միանշանակ պատասխան տալ: Արդի բառարաններում բացակայում է քննարկվող եզրույթի մեկնաբանությունը, լեզվաբանորեն դժվար է այն սահմանել, քանի որ «էլեկտրոնային» և «կառավարում» բառերը շարահյուսորեն չեն կապակցվում, ինչը պայմանավորված է իմաստաբանական տարբերություններով: Նման համակցությունները լեզվաբանության մեջ կոչվում են մետոնիմիա (փոխանունություն)<sup>4</sup>, որն առաջանում է սկզբունքորեն տարբեր հարթություններ ընդգրկող տարասեռ եզրույթների համադրումից: «էլեկտրոնային կառավարում» հասկացությունը միավորում է ֆիզիկական-տեխնիկական և սոցիալական հարթությունները:

Իրավական տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունում քննարկվող տերմինն ընդհանրապես լուսաբանված չէ: Չնայած այն հանգամանքին, որ այսօր գործում են մի շարք նորմատիվ-իրավական ակտեր («էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 26.01.2006թ.

<sup>3</sup> St'u Michiel Backus, **E-Governance and Developing Countries, Introduction and examples, Research report N 3, April, 2001**, <http://www.iicd.org/about/publications/egovernance-and-developing-countries-introduction-and-examples/report3.pdf>

<sup>4</sup> St'u Кузнецов П.У., Административная реформа в контексте формирования электронного правительства: Терминологические проблемы, Российский юридический журнал, 2012, N3, <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=CJI;n=62905>

«էլէկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ 137-Ն, 11.11.2010թ. «էլէկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» թիվ 1504-Ն, 25.01.2008թ. «էլէկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններին առաջադրվող տեխնիկական չափանիշները հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշումները և այլն), որոնք ուղղակի կապի մեջ են գտնվում «էլէկտրոնային կառավարման» ինստիտուտի հետ, սակայն գոյություն չունի որևէ իրավական ակտ կամ ցանկացած այլ պաշտոնական փաստաթուղթ, որը կարգաբանի, թե ի՞նչ է էլէկտրոնային կառավարումը: Ավելին, չնայած այն հանգամանքին, որ «կառավարում» եզրույթը ասոցացվում է գործադիր իշխանության մարմինների հետ, «էլէկտրոնային կառավարումը»՝ որպես համակարգ, գործադիրի հետ մեկտեղ ընդգրկում է թե՛ օրենսդիր և թե՛ դատական իշխանությունների գործունեությունը:

ՀՀ օրենսդրության մի շարք իմպերատիվ դրույթներ անդրադառնում են իրավական ակտի որոշակիությանը: Այսպիսով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանվող իրավական ակտերին ներկայացվող ընդհանուր պահանջների թվում է նաև նորմատիվ իրավական ակտի կողմից միաբնույթ (մեկ ոլորտ կարգավորող) հարաբերությունների կարգավորումը: Նույն օրենքի 36-րդ հոդվածը դրույթներ է պարունակում իրավական ակտի լեզվի վերաբերյալ, մասնավորապես՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի, չի թույլատրվում հնացած և բազմիմաստ բառերի ու արտահայտությունների, պատկերավոր համեմատությունների, այլաբանությունների, չափազանցությունների, փոխաբերական իմաստով բառերի կամ արտահայտությունների, թաքնված ենթատեքստերի, ինչպես նաև օտարալեզու տերմինների անհարկի օգտագործումը, իրավական ակտում բազմիմաստ բառ օգտագործվելու դեպքում պետք է սահմանվի, թե բառը որ իմաստով է օգտագործվում, իրավական ակտի դրույթները պետք է ընկալվեն միանշանակ, իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները:

Սակայն իրավաստեղծ գործունեությունը ձևավորվել ու զարգացել է տեսությունից անկախ: Որպես օրինակ՝ շրջանառության մեջ է դրվել «վարչական մարմին» տերմինը, երբ օրենսդրությունում արդեն իսկ գոյություն ուներ վերջինիս համարժեք «հանրային իշխանության մարմին» տերմինը: Ընդհանրապես, առանց որևէ լուրջ անհրաժեշտության, հոմանիշ եզրույթների ներմուծումն անհարկի շփոթ է ստեղծում իրավակիրառ գործունեությունում, այն չի նպաստում իրավական որոշակիության սկզբունքի պահպանմանը: Ցանկացած նոր եզրույթ սկզբնական շրջանում անխուսափելիորեն ընկալվում է որպես իմաստով միանգամայն նոր, քանզի ողջամիտ տրամաբանությունը հուշում է, որ նոր եզրույթ կիրառելու անհրաժեշտությունը թելադրված է միանգամայն նոր բովանդակությամբ ինստիտուտ կամ իրավական երևույթ արտացոլելու համար: Հոմանիշների առատությունը կարող է խրախուսել լինել գեղարվեստական խոսքում, սակայն այն պարզապես անթույլատրելի է իրավական փաստաթղթերում, մանավանդ երբ բավարար չափով չի բացահայտվում այն ներդնելու անհրաժեշտությունը:

Ազգային օրենսդրության մեջ խնդիրներ են ստեղծում նաև այլ երկրների իրավական ակտերից կատարված ոչ համարժեք թարգմանությունները: Օրինակ՝ Սահմանադրու-

յամբ դատախազին վերապահված է «պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցել» լիազորություն, մինչդեռ՝ բովանդակային իմաստով խոսքը ոչ թե պետական, այլ հանրային շահերի մասին է, որն ավելի լայն և տվյալ համատեքստում ողջամիտ հասկացություն է: Դրա հետևանքով դատախազը ՀՀ-ում գրկվել է հանրության շահերի պաշտպանության իրավական հնարավորությունից, հատկապես այն դեպքերում, երբ խոսքը սոցիալապես թույլ պաշտպանված խավերի մասին է՝ հաշմանդամներ, երեխաներ, անգործունակներ և այլն:

Մեկ այլ օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով «իրավախախտում» եզրույթը թարգմանվել է «հանցագործություն», 19-րդ հոդվածով «ներկայություն»-ը՝ «մասնակցություն» և այլն<sup>5</sup>: Այս դեպքում սխալ թարգմանություն որակելու գնահատականի հիմքում ոչ թե մեր սուբյեկտիվ ընկալումներն են, այլ կոնկրետ այն միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված նորմերը, որոնք դրված են երկրի Հիմնական օրենքի հիմքում: Ընդ որում, ակնհայտ սխալ թարգմանության արդյունքում առանձին իրավիճակներում գրեթե բացառվում է երաշխավորել միջազգային չափանիշներին լիարժեք համահունչ իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեություն:

Կարծում ենք՝ հարկ է պարզ գիտակցել, որ իրավական ակտում տեղ գտած հասկացությունների ոչ լիարժեքությունը, երկիմաստությունը, շատ դեպքերում ընդհանրապես բացակայությունը զուտ տեխնիկական խնդիրներ չեն. դրանք հանգեցնում են օրենքի բացի, որն էլ իր հերթին գնահատվում է որպես իրավական որոշակիության սկզբունքի խախտում: Իրավական որոշակիության սկզբունքն առաջին հերթին ենթադրում է կայունություն: Այնինչ մեր իրավաստեղծ պրակտիկայում նորմատիվ իրավական ակտերում տերմինների սահմանումից հետո է միայն բացահայտվում, որ դրանք ոչ միայն չեն բավարարում իրավական որոշակիության կանոնները, այլևս հղի են հակասահմանադրական իրավիճակներ ստեղծելու վտանգով: ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով նույնպես անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին, մասնավորապես՝ 13.05.2008թ. թիվ ՍԴՈ-753 որոշման համաձայն. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի ամրակայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Միջազգային պրակտիկան տերմինաբանական չափանիշներով ևս չի շրջանցել իրավական որոշակիության սկզբունքի պահպանման անհրաժեշտության հարցը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Ryabykh v. Russia* N 52854/99, ECHR 2003-X; *Brumarescu v. Romania Reports* 1999-VII և մի շարք այլ գործերով անդրադարձել է օրենքի իրավական որոշակիության հիմնախնդրին: Այսպես, Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է. «Նախ՝ «օրենքը» պետք է լինի մատչելի. քաղաքացիները պետք է հան-

<sup>5</sup> Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ հոդվածները:

գամանքներին համապատասխան հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե ինչպիսի իրավական նորմեր են կիրառվում տվյալ դեպքի նկատմամբ: Բացի դրանից, նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, ինչը քաղաքացուն հնարավորություն կտար դրա հետ համատեղելու իր վարքագիծը. քաղաքացին պետք է հնարավորություն ունենա կանխատեսելու այն հետևանքները, որոնց կհանգեցնի տվյալ գործողությունը»<sup>6</sup>:

Սանդի Թայմսի գործով Եվրոպական դատարանը նաև մեկնաբանել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտությունից բխում են երկու պահանջներ: Նախ և առաջ՝ իրավունքը պետք է լինի միևնույն չափով մատչելի. քաղաքացիները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմ է կիրառվելու: Երկրորդ՝ նորմը չի կարող համարվել օրենք, եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա քաղաքացիներին դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան հանգամանքների ողջամիտ իրականացմամբ կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջացնել տվյալ գործողությունները:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը (ՌԴ Սահմանադրական դատարանի 1995թ. ապրիլի 25-ի թիվ 3-Պ որոշում, ՌԴ Սահմանադրական դատարանի 2003թ. նոյեմբերի 11-ի թիվ 16-Պ որոշում, 2004թ. հունիսի 17-ի թիվ 12-Պ որոշում) պարզաբանել է, որ իրավական նորմի որոշակիության, հստակության և ոչ երկիմաստության պահանջը բխում է հավասարության և արդարության սահմանադրական սկզբունքներից, քանի որ այլ բան չի կարող ապահովել իրավական նորմի միասնական կիրառությունը և բացառել իրավակիրառ պրակտիկայում անսահմանափակ հայեցողությունը, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է կամայականության: Օրենքի առջև հավասարությունը հնարավոր է ապահովել միայն բոլոր իրավակիրառողների կողմից իրավական նորմի միասնական ընկալման և մեկնաբանման դեպքում:

Այսօր, ցավոք, Հայաստանի Հանրապետության իրավաստեղծ գործունեությունը բոլորովին այլ ուղով է ընթանում: Ազգային օրենսդրությունը ոչ միայն թերանում է հստակ ձևակերպումներ տալու հարցում, այլև ներմուծում է այնպիսի օտարածին տերմիններ, որոնք ոչ միայն հավուր պատշաճի ընկալելի չեն քաղաքացիների սովոր հատվածի, այլև մասնագետ իրավաբանների համար: Ընդգծենք, որ օրենսդրական գործընթացի անբաժան մասն է օրենքի նախագծերի լեզվաոճական, խմբագրական փորձաքննությունը և սրբագրումը, որոնց պատշաճ իրականացման համար Հայաստանի Հանրապետությունում պատասխանատու է Ազգային ժողովի քարտուղարությունը: Տրամաբանական է, որ նշված գործառնություններն իրականացվում են լեզվաբանների կողմից, և ավելի քան անհրաժեշտ է, որ վերջիններս կարողանան ընկալել իրավական ակտի և կարգավորվող հասարակական հարաբերությունների էությունը: Այսինքն՝ օրենսդրական գործընթացն ինքնին ենթադրում է իրավագիտության և լեզվաբանության միահյուսումը: Այդ իսկ պատճառով օրենսդրական գործընթացին մասնակից դարձած մասնագետը նույնպես պետք է կարողանա համատեղել իրավագիտությունը լեզվաբանության հետ. հակառակ դեպքում կստեղծվի քառասյին իրավիճակ, ինչպիսին այսօր հաճախ է հանդիպում պրակտիկայում:

Սույն աշխատության ուսումնասիրության առարկա հանդիսացող «Էլեկտրոնային կառավարում» հասկացությունը նույնպես բացառություն չէ: Այսօր պետական մարմին-

<sup>6</sup> St' u Sunday Times v. United Kingdom, N 6538/74, 26.04.1979

ները, լրատվության միջոցները շարունակ արծարծում են էլեկտրոնային կառավարման թեման՝ առանց որևէ հստակ հայեցակարգ ունենալու, ավելին՝ առանց տերմինի իմաստը բացահայտելու: Այդ իսկ պատճառով քաղաքացին թյուր պատկերացում է կազմում և վստահություն չի ունենում մի համակարգի նկատմամբ, որի ներդրումը մեծ գումարների, աշխատանքի և երկար տարիների արդյունք է, և որը, որպես հետևանք, չի կարողանում ծառայել իր նպատակին:

Համեմատական վերլուծությունը բերում է այն համոզման, որ առանց դրա խիստ հիմնավորված պատճառաբանության օտարածին տերմինների կիրառման շրջանակներն ընդգրկում են հատկապես էլեկտրոնային կառավարման ոլորտում: Խնդրի լրացուցիչ բարդությունը այն է, որ այդ տերմինների ստվար հատվածը համարժեք ընկալում չունի նաև էլեկտրոնային շրջանառությունում, քանզի դրանք, ըստ էության, հաճախ նախատեսված են իրենց ավանդական բովանդակությունից էապես տարբերվող իմաստով:

Այսպիսով, հարկ է լինում իրավական հարաբերությունների կարգավորման ոլորտում կիրառել այնպիսի նոր տերմիններ, որոնց լիարժեք բովանդակությունը բացահայտված չէ հենց «սկզբնաղբյուրներում»՝ համակարգչային-էլեկտրոնային տիրույթում:

Ամփոփելով վերոգրյալը և գիտակցելով բարձրացված խնդրի նշանակությունը՝ կարծում ենք, որ նորմատիվ իրավական ակտերում տերմինոլոգիայի միասնականությունը և կայունությունն ապահովելու, իրավական անհրաժեշտ որոշակիություն երաշխավորելու, լեզվի անաղարտության խնդիրները հավուր պատշաճի լուծելու նկատառումով անհրաժեշտ է ղեկավարվել որոշ նվազագույն պահանջներով, մասնավորապես՝ առաջարկվում է հիմնվել առնվազն հետևյալ ելակետային դրույթների վրա՝

- հարկ է իրավական ակտերում ապահովել տերմինների միատեսակ մեկնաբանությունն ու ընկալումը,

- էլեկտրոնային կառավարման շրջանակներում կարող են կիրառվել միջազգային ճանաչում ունեցող պայմանական նշաններ, սակայն յուրաքանչյուր դեպքում հարկ կլինի օրենսդրությամբ հստակ բացահայտել դրանց իմաստն ու կիրառման սահմանները,

- հնարավորության դեպքում խուսափել օտարածին տերմինների կիրառումից, հատկապես՝ մայրենի լեզվում դրանց համարժեքն ունելու պարագայում և օրենսդրորեն հստակ ամրագրել օտար տերմինների կիրառման սպառիչ հիմքերն ու պայմանները,

- օտարածին տերմինների օգտագործման պարագայում նպատակահարմար է յուրաքանչյուր դեպքում համապատասխան իրավական ակտում հստակ սահմանել, թե տվյալ տերմինը ինչ բովանդակությամբ և իմաստով է օգտագործված,

- յուրաքանչյուր դեպքում հստակ ամրագրել, թե այս կամ այն օրենսդրական ակտով ամրագրված եզրույթը կոնկրետ որ իրավական հարաբերություններում կարող է կիրառվել՝ ընդունելով, որ միևնույն եզրույթը կարող է կիրառվել մի քանի նշանակությամբ,

- օրենսդրական գործընթացին մասնակից լեզվաբանների համար մշակել վերապատրաստման հատուկ դասընթացներ,

- միջազգային փորձի համարժեք հաշվառմամբ անհրաժեշտ է շրջանառության մեջ դնել և մատչելի դարձնել համապատասխան բացատրական բառարան, որը կներառի ներպետական իրավական ակտերում օգտագործվող տերմինների բացատրությունները:

## CONTEMPORARY PROBLEMS OF THE LANGUAGE POLICY IN THE CONTEXT OF E-GOVERNANCE

**Nane GHAZARYAN**

*Postgraduate Student of the YSU Chair of Constitutional Law*

---

Lawmaking and enforcement are inevitably connected with language policy and are often conditioned by the ongoing developments of the mentioned field. The language problem here is not limited to merely technical matter; it determines the human rights protection level in the current social system. Moreover, the issue is not about the use of mother tongue in public legal relations or other linguistic guarantees; the task is more complicated, as it relates to some vital key principles, such as legal certainty, legality etc. In particular, when a legal norm is incomprehensible or does not meet linguistic requirements, it leads to legal uncertainty and may be declared unconstitutional.

Unfortunately, such issues lack research. We believe that mentioned is dictated by the fact that contemporary problems of law and language policy are reviewed exclusively by lawyers, when it is obvious that we are dealing with a complex problem.

In the scopes of this article we go beyond the traditional methodology and examine language policy problems in the context of e-governance. The field was picked, not only because of its innovativeness, but also because this type of governance deals with language policy on the whole and mostly with the computerized language policy. Hence, one of the goals of this piece of work is to disclose the flaws and problems of the language policy of the RA, proposing solutions applicable for a whole new field, e-governance.

## СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЛИНГВОПОЛИТИКИ В СФЕРЕ ЭЛЕКТРОННОГО ПРАВИТЕЛЬСТВА

**Нане КАЗАРЯН**

*Аспирант кафедры конституционного права ЕГУ*

---

Правотворчество и правоприменение связаны непосредственно с лингвополитикой, и часто обусловлены развитием данной сферы. Вопрос языка в указанной социальной системе не ограничивается лишь техническим значением, он предопределяет степень гарантированной защищенности прав человека в данном социуме. Задача несравнимо комплексная, сопряженная с полной и последовательной реализацией таких осевых принципов, как правовая определенность, законность и так далее. Правовая норма, не обеспечивающая эквивалентного восприятия с языковой точки зрения, автоматически считается не соответствующей требованиям правовой определенности, со всеми вытекающими отсюда отрицательными последствиями, вплоть до признания ее противоречащей Конституции.

К сожалению, современные проблемы правоведения, касающиеся лингвополитики, исследуются только методами, присущими правоведению, но, очевидно, что в



данном случае имеется необходимость в комплексном и полном исследовании материала. Мы выдвигаем основные проблемы лингвополитики в контексте электронного управления за пределы традиционной методологии. Выбор сферы определен ее неисследованностью и тесной связью с общей и компьютерной лингвополитикой. Цели данной работы: выявить пробелы и задачи в сфере лингвополитики в РА, найти решения, применимые в процессе становления электронного управления.

**Բանալի բառեր** – էլեկտրոնային կառավարում, լեզվաքաղաքականություն, օրինաստեղծ գործունեություն, տերմինաբանություն, իրավական որոշակիություն, իրավական պետություն:

**Ключевые слова:** электронное правительство, лингвополитика, правопроизводство, терминология, правовая определенность, правовое государство

**Key Words:** e-governance, governance, language policy, lawmaking, terminology, legal certainty, jural state